



# ՍՈՒՐԲ ՉԱԿՈԲ ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍ ՄԱՅՐ ԵԿՂՈՂԵՑԻ

Հոգեգալուս  
19 ՄԱՅԻՍ 2024

Կիրակօրեայ Ընթերցումներ էջ 1  
Ծանուցում էջ 2

## ԸՆԹԵՐՑՈՒՄ «ԱՌԱԳԵԱԼՆԵՐՈՒ ԳՈՐԾԵՐԸ» ԳԻՐՔԵՆ (2.1-21)

**Ե**րբ Պենտէկոստէի օրը հասաւ,  
բոլոր հաւատացեալները  
միասնաբար մէկտեղուածէին: Յանկարծ  
սաստիկ հովի մը սուլոցին պէս ձայն  
մը հնչեց երկինքէն եւ լեցուց ամբողջ  
տունը ուր անոնք նստած էին: Յետոյ  
անոնք հրեղէն լեզուներ տեսան,  
որոնք տարածուեցան եւ հանգչեցան  
իւրաքանչիւրին վրայ: Բոլոր ներկաները  
Սուրբ Հոգիով լեցուեցան եւ սկսան  
տարբեր լեզուներ խօսիլ, ինչպէս որ  
Հոգին խօսիլ կու տար:

Այն օրը երուսաղէմ քաղաքը  
լեցուն էր բարեպաշտ հրեաներով,  
որոնք աշխարհի չորս կողմերէն եկած  
էին: Երբ այս ձայնը լսուեցաւ, մեծ  
բազմութիւն մը եկաւ խռնուեցաւ  
այնտեղ եւ բոլորը անակնկալի եկան,  
որովհետեւ կը լսէին թէ ի՞նչպէս անոնք  
իրենցմէ իւրաքանչիւրին լեզուով կը  
խօսէին: Ամէնքն ալ սքանչացումով

եւ զարմանքով կ'ըսէին իրարու. «Այս  
խօսողները բոլորն ալ Գալիլիացիներ  
չե՞ն միթէ. ի՞նչպէս կ'ըլլայ որ մեր  
ծննդավայր երկիրներու լեզուներով կը  
խօսին, ինչպէս ահաւասիկ կը լսենք:  
Զէ՞՞ որ ահա մեր մէջ կան պարթեւներ,  
մարեր, ելամացիներ, միջագետացիներ,  
հրեաներ, կապադովկիացիներ, պոն-  
տացիներ, ասիացիներ, փոխագիացիներ  
եւ պամփիլիացիներ, եգիպտացիներ,  
Կիւրենիայի շրջանէն լիպիացիներ,  
Հոռմէն եկած հրեայ եւ հրէութեան  
դարձած այցելուներ, կրետացիներ  
եւ արաբիացիներ: Եւ ահա բոլորս ալ  
մեր լեզուներով իրենցմէ կը լսենք  
Աստուծոյ մեծամեծ գործերուն մասին»:  
Ապչահար, անոնք զարմանքով կը  
հարցընէին իրարու. «Ի՞նչպէս կարելի  
է բացատրել ասիկա»: Իսկ ոմանք  
կատակելով կ'ըսէին. «Նոր գինիով  
գինովցած են»:

Այն ատեն Պետրոս տասնըմէկ  
առաքեալներուն հետ ոտքի ելաւ եւ  
բարձրածայն սկսաւ անոնց խօսիլ.-

«Ո՛վ հրէաստանցիներ եւ դուք  
որ հիմա երուսաղէմ կը գտնուիք.  
իրականութիւնը գիտնալու համար  
լսեցէք ինչ որ պիտի ըսեմ: Դուք կը  
կարծէք թէ ասոնք գինով են. բայց  
այդպէս չէ, որովհետեւ առտուան ժամը

**Ինն է դեռ: Մինչդեռ ասիկա կատարումն է Յովելի մարդարէութեան որ կ'ըսէ.**

“Այնուհետեւ երբ վերջին օրերը գան, - կ'ըսէ Աստուած, - իմ Հոգիս պիտի թափեմ բոլոր մարդոց վրայ. ձեր տղաքն ու աղջիկները իմ պատգամներս պիտի փոխանցեն ձեզի, ձեր երիտասարդները տեսիլ են պիտի ունենան եւ ձեր ծերերը երազներ պիտի տեսնեն:

Երկինքի բարձունքին  
վրայ հրաշքներ  
պիտի ցուցնեմ, եւ  
նշաններ՝  
վարը երկրի  
վրայ.

Այն օրերուն իմ Հոգիս պիտի թափեմ նաև իմ ծառաներուս եւ աղախիններուս վրայ, եւ անոնք եւս իմ պատգամներս պիտի փոխանցեն ձեզի: Երկինքի բարձունքին վրայ հրաշքներ պիտի ցուցնեմ, եւ նշաններ՝ վարը երկրի վրայ. աշխարհ արիւնով, կրակով ու թանձր ծուխով պիտի լեցուի, արեւը պիտի խաւարի եւ լուսինը արիւնի գոյն պիտի առնէ, եւ ի վերջոյ պիտի հասնի Տիրոց մեծ եւ ահեղ օրը: Այն ատեն ով որ Տէրը օգնութեան կանչէ՝ պիտի փրկուի”»:

## ՅԻՍՈՒՄ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԻՆ ԸՍ ՅՈՎՀԱՆՆԵՍԻ (14.25-31)

**Մ**եր Տէրը Յիսուս Քրիստոս կ'ըսէ.- «Այս բոլորը խօսեցայ ձեզի, քանի տակաւին ձեզի հետ եմ: Բայց Միսիթարիչը՝ Սուրբ Հոգին, որ Հայրը ձեզի պիտի դրկէ իմ անունովս, ան ձեզի ամէն ինչ պիտի սորվեցնէ եւ յիշեցնէ ինչ որ ես ձեզի ըսի: Խաղաղութիւն

կը թողում ձեզի. իմ խաղաղութիւնս է որ կու տամ ձեզի, որ այս աշխարհի տուած խաղաղութենէն տարբեր է: Մի՛ խռովիք եւ մի՛ վախնաք: Լսեցիք

ինչ որ ըսի ձեզի, թէ “Ահա կ'երթամ, բայց կրկին պիտի գամ ձեզի”: Եթէ զիս կը սիրէք, ուրախ պիտի ըլլաք որ Հօրս կ'երթամ, որովհետեւ Հայրս ինձմէ մեծ է: Այս բոլորը ձեզի ըսի նախ քան պատահիլը, որպէսզի երբ պատահի՝ այն ատեն հաւատաք: Այլեւս երկար պիտի չխօսիմ ձեզի, որովհետեւ ահա կու գայ այս աշխարհի իշխանը, որ իմ վրաս ոչ մէկ իշխանութիւն ունի: Բայց աշխարհը պէտք է գիտնայ թէ ես Հայրը կը սիրեմ եւ ա'յդ է պատճառը որ ինձի բոլոր պատուիրածները կը կատարեմ: Ելէք, երթանք այստեղէն»:

Հոգեւագաւառ  
Զեր արշանագրութեան ազնօրօք  
Կատարեթէք Կարուիլով  
Եկեղեցի գրաւենաւ:

Թերթիւն Աստվածածին  
գՏԱԿ  
[www.sourphagop.net](http://www.sourphagop.net)  
ԿԱՅՁՁԻՆ ՎՐԱՅ

Սոյն թերթիւնը Ե-ԱԿԱԴԵԿԱ ԱՏՎԱՎԼՈՒ  
ՀԱՅԱՐ ԶԵՐ Ե-ՀԱՅԱՅԷՆ ՊԻՊԱՐԿԵՑՔ  
[eglise@sourphagop.net](mailto:eglise@sourphagop.net)

իմ խաղա-  
ղութիւնս է  
որ կու տամ  
ձեզի, որ այս  
աշխարհի  
տուած  
խաղաղու-  
թենէն  
տարբեր է: